


Համագգալիյնի Պէլրութի Ճեմարանը

ԻՆՉ Է «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ»



«Հայ Կրթական եւ Հրատարակչական Համագային Ընկերությունը» 28 Մայիս 1928-ին Գահիրէի մէջ հիմնուած Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան սկզբնական անունն էր: Համագայինի հիմնադիր ինը անդամներն էին Լեւոն Շանթ, Համօ Օհանջանեան, Նիկոլ Աղբալեան, Ստեփան Եսայեան, Գասպար Իփէկեան, Մինաս Խաչատուրեան, Սեդրակ Պալըզճեան, Յակոբ Պալըզճեան եւ Սարգիս Մալխասեան:

Ընկերութեան կանոնագրի առաջին կէտը ճշդած էր «Համագային»-ին նպատակը նշելով հետեւեալ տողերը. «Հայ Կրթական եւ Հրատարակչական Համագային Ընկերութեան նպատակն է հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզուով եւ հայ հոգիով»:

Այս նպատակին հասնելու համար «Համագային»ը պիտի գործէր երեք ձեւերով.

1. Նոր սերունդին հայեցի կրթութիւն տալ.
2. Նպաստել չափահասներու ինքնազարգացման.
3. Մշակել հայագիտութիւնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՒԱՔԸ (ՖՈՐՈՒՄ)



Համագայինի Ուսանողական Հաւաքը (Ֆորումը), Հայաստան շրջագայութիւն մըն է, որուն ընթացքին ուսանողներ ընկերային ջերմ մթնոլորտի մը մէջ, կը կատարեն այցելութիւններ, կ'ունենան հանդիպումներ, դասախօսութիւններ եւ կը ծանօթանան Հայաստան հայրենիքին:

Համագայինի Գանադայի Շրջանային վարչութիւնն ու Համագայինի Քեպէգի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը ամէն տարի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի, Բաստրմաճեան երկրորդականի ատարական դասարանի վկայականի բաշխման հանդիսութեան, հայերէնի եւ հայոց պատմութեան մէջ դասարանին բարձրագոյն միջինը ապահովող աշակերտներուն կը նուիրեն Համագայինի Ֆորումին մասնակցութեան ճանապարհածախսը:

Անցեալ տարի այս մրցանակին արժանացաւ Լուսինէ Զաքարեան: Սկորեո իր փառաբանութիւնները այս առթիւ:

Ոչինչ կրնայ համեմատուիլ այն լաւ ժամանակին, զոր անցուցի այս ամառ Համագայինի ուսանողական հաւաքին մասնակցելով: Այս ծրագրին շնորհիւ, ես կրցայ հայրենիքիս կարօտն առնել եւ աւելի ծանօթանալ իմ իսկ ինքնութեանը:

Երկու շաբթուան ընթացքին, իմ պատկերացումս հայութեան մասին բաական ընդլայնեցաւ: Ծանօթացայ աշխարհի տարբեր կողմերէ եկած հայերու: Ամէն մէկը իր սեփական յատկութիւններով կը փայլէր, եւ մէկը միւսէն տաղանդաւոր էր: Շատ հաճելի էր տեսնել, որ աշխարհի չորս կողմերէն այդքան հայրենասէր եւ հայկական ինքնութեամբ հպարտացող հայեր կան:

Հայաստանի տեսարժան վայրերը շրջեցանք, թանգարաններ այցելեցինք, դասախօսութիւններու եւ մշակութային ձեռնարկներու մասնակցեցանք, եւ այդպիսով ես կրցայ աւելի խոր կապ հաստատել հայկական մշակոյթին հետ: Մնացած ժամերը անցուցինք երգով, պարով, խաղերով եւ զրոյցներով, այնպէս որ ամէն վայրկեան ուրախ եւ խանդավառ էինք:



Երագի նման արագ անցան այդ երկու շաբթոները, եւ նոյնիսկ եթէ յոգներ էինք արդէն, բոլորս ալ տխուր էինք, որ ծրագիրը հասած էր իր աւարտին: Բոլորս ընտանիքի պէս մտերմացած էինք, եւ իրարու հրաժեշտ տալը շատ դժուար եւ յուզիչ էր: Ես երբեք չէի կարծեր, որ կարելի էր այդքան դիւրութեամբ ընտելանալ մարդոց հետ: Ամէն ինչէն գոհ եւ ուրախ մնացի եւ շնորհակալ եմ Համագայինին ինծի առիթը տալուն համար այս հրաշալի ծրագրին մասնակցելու: Ես Հայաստանէն վերադառնալէս ետք նոյնիսկ միշտ պիտի յիշեմ այդ լաւ օրերը, զորս անցուցի ուսանողական հաւաքին ժամանակ:

Լուսինէ Զաքարեան

ՀԱՅՈՑ ԱՅՐՈՒԲԵՆ



Մեսրոպ Մաշտոց աղօթեց,
Աստուած մեզ տառեր տուեց,
Տառեր, որ կարդանք, գրենք,
Հայոց լեզուն սովորենք:

Մեսրոպ Մաշտոց աշխատեց,
Այբուբենը յօրինեց,
36 Գոհարներ
Հայոց լեզուին նուիրեց:

Մեսրոպ Մաշտոց աղօթեց,
Սուրբ տեսիլքը յայտնուեց,
Գրի առաւ լոյս տառեր,
Երկաթագիր աստղիկներ:

Մեսրոպ Մաշտոց թարգմանեց
Սուրբ գիրքը հայոց լեզուով,
Որ մենք կարդանք հայ գրով
Աստուծոյ խօսքը հաւատով:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐՊ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Անահիտ Պալեան

«Ըսէ ինծի ընկերդ,
Ըսեմ քեզի՝ թէ ով ես»

Դասընկերներ շատ են մեր շուրջ,
Ընկեր գտնել հարց մըն է լուրջ:
Հարազատներ, ազգականներ,
Ուզենք թէ չէ, շուրջն են մեր.
Բայց ընկերներ հազուադիւս են,
Գաղափարով մեզ նման են,
Արտաքինով ոչ անպայման
Աշխարհիս մէջ այս անսահման
Հազարաւոր մարդոց մէջէն
Կ'ընտրենք զիրենք
Ու կը սիրենք:



Ընկերը այն ծանօթ անձն է,
Այն մտերիմ բարեկամն է,
Երբ ուրախ պահին թէ տխուր,
Երբ տկար ենք, խեղճ ու լուռ,
Միշտ մեր կողքին կը կանգնի,
Դժուար պահին կը հասնի:



Ընկերներ կը ներեն զիրար:
Ընկերներ կը սիրեն զիրար:
Լաւ ընկերներ սուտ չեն խօսիր,
Լաւ ընկերներ գէշ չեն վարուիր,
Լաւ ընկերներ անկեղծ կ'ըլլան,
Իրարու կ'ըլլան միշտ օգնական:

Ընկերներ պահելու համար,
Պէտք է ըլլալ միշտ արդար,
Պէտք է գիտնալ՝ բաժնել ու տալ:



ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Շողակաթ եկեղեցին կը գտնուի Էջմիածին քաղաքի հիւսիսը: Ան կառուցուած է 1694-ին հոն, ուր Հռիփսիմեան քրիստոնեայ նահատակներուն վրայ «շող կաթած է»:

Երբ Գայիանեաց 37 կոյսերը Վաղարշապատ (Էջմիածին) կը հասնին, կը բնակին Սուրբ Շողակաթ եկեղեցւոյ հիւսիս-արեւելեան կողմը գտնուող այգիներուն մէջ: Անոնք իրենց օրական սնունդը կ'ապահովեն իրենց ունեցածները ծախելով, նաեւ վաճառելով քոյրերէն մէկուն պատրաստած ապակեայ ուլունքները: Երբ կը յայտնաբերուին փախստական կոյսերը, հայոց թագաւորը արքունիքէն սպասաւորներ կ'ուղարկէ, հրամայելով իր մօտ բերել Հռիփսիմէն: Սակայն կոյսերը կը դիմադրեն: Թագաւորը լսելով վերջիններուն դիմադրութեան մասին, կը հրամայէ բռնութեամբ իր մօտ բերել Հռիփսիմէն, որ ճամբուն վրայ կը նահատակուի իր ընկերուիներուն հետ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ երբ Խոր Վիրապէն կ'ելլէ, այս կոյսերուն նահատակութեան վայրին մէջ կառուցել կու տայ երեք մատուռներ. առաջինը՝ Սուրբ Հռիփսիմէի գերեզմանին վրայ, երկրորդը՝ Սուրբ Գայիանէի գերեզմանին վրայ, եւ երրորդը՝ հնձանի մը վրայ, որ դարձած է Սուրբ Մարիանէի գերեզմանը: Սուրբ Մարիանէն իր հիւանդութեան պատճառով չէր կրցած միանալ Հռիփսիմէի մարմինը թաղելու արարողութեան եւ մնացած էր հնձանին մէջ: Նոյն այդ հնձանին մէջ էր երբ երկինքէն «կաթեցան» Աստուծոյ լոյսի շողերը: Ահա այդ պատճառով է, որ Սուրբ Մարիանէի մատուռը կոչուեցաւ Սուրբ Շողակաթ:

ԻՍԿ ԻՆՉ Է ՀՆՁԱՆԸ

Հնձանը այգիներու մէջ, գետնի մէջ փորուած մաքուր աւազան մըն է, ուր հաւաքուած խաղողները ոտքով կը ճմլեն:



ՀԱՏԱԴՏՈՒՂՆԵՐ

Հատապտուղները փոքր հիւթալի պտուղներ են: Անոնմէ ոմանք քաղցր են, ոմանք թօռ: Հատապտուղները հարուստ ըլլալով կենսասնիութեամբ եւ հակաօքսիտաններով, իրենց բարենպաստ ազդեցութիւնը ունին մեր մարմնի բջիջներուն վրայ:

Ելակը յայտնի է իր վառ կարմիր գոյնով եւ քաղցր համով: Ան հարուստ է C եւ B9 կենսասնիութեամբ:

Հապալասը (Blueberry) ծանօթ է իր փոքր, կլոր եւ մանիշակագոյն-կապոյտ գոյներով: Ան հարուստ է C եւ K կենսասնիութեամբ եւ կը զօրացնէ մարմնի դիմադրողականութիւնը:

Ազնուամորին (Raspberry) ընդհանրապէս կարմիր գոյն ունի. հարուստ է C կենսասնիութեամբ եւ մանրաթելով (fibre), ինչ որ կը նպաստէ մարսողութեան:

Մռշը (Blackberry) ընդհանրապէս սեւ գոյն ունի. հարուստ է մանրաթելով եւ կենսասնիութեամբ, որոնք կը նպաստեն սրտի առողջութեան:

Լոռամիրգը (Cranberry) յայտնի է իր կարմիր գոյնով: Ան հարուստ է հանքանիւթերով, մանրաթելերով, ինչպէս նաեւ C, E եւ K կենսասնիութեամբ:

Հաղարջը (Goosebery) կրնայ ըլլալ կարմիր, ճերմակ կամ սեւ: Երեք տեսակներն ալ կ'իյնան սննդարար պտուղներու ցանկին մէջ, որովհետեւ բուժիչ յատկութիւններով օժտուած են: Կարմիր ու ճերմակ հաղարջը աւելի քաղցր է, քան սեւ հաղարջը, սակայն սեւը աւելի հարուստ է սննդական տարրերով: Անիկա կրկնակի անգամ կը պարունակէ կենսանիւթ A եւ հինգ անգամ աւելի կենսանիւթ C: Իսկ հաղարջի բոլոր տեսակները կը պարունակեն կարգ մը հանքային աղեր, ինչպէս՝ փոթասիւմ:



ԺԱՆՏԱԿՈՒՋ (SKUNK)

Ժանտակուզը գիշերային կենդանի մըն է: Ան ցերեկը կ'անցընէ իր թաքստոցին մէջ եւ գիշերները դուրս կու գայ ուտելիք փնտռելու: Կը սիրէ ուտել որդեր, մանրէներ, պտուղներ եւ երբեմն ալ փոքրիկ կենդանիներ: Իր ներկայութիւնը կարելի է, որովհետեւ կը մաքրէ դաշտերը մսասակար կենդանիներէ եւ միջատներէ:

Կատուի չափով այս կենդանին, իր սեւ մորթին վրայ ունի երկու ճերմակ գիծեր: Ժանտակուզի ամենամեծ յատկութիւնը սակայն, իր «պաշտպանութեան միջոց»ն է: Երբ ան կը վախնայ կամ վտանգ մը կը զգայ, մարդոց եւ կենդանիներուն իր քովէն հեռացնելու նպատակով, շատ զօրաւոր եւ տհաճ հոտ մը կ'արձակէ:

Այլապէս ժանտակուզը բնաւորութեամբ խաղաղ կենդանի մըն է, եթէ անոր չմօտենաս, ան երբեք մնաս չի հասցներ քեզի:



Ո՞Վ Կ'ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Հոկտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 12 Նոյեմբեր 2025: Հետեաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin
Montréal, Québec
H4J 1L5

1- Ո՞վ է հայ գիրերու գիտի մեծանուն հեղինակը:

- ա) Ս. Սահակ Պարթեւը:
բ) Ս. Մեսրոպ Մաշտոցը:
գ) Կորիւն Սքանչելին:

2- Հայոց որ թագաւորի օրով տեղի ունեցաւ հայ գիրերու գիտը:

- ա) Վռամշապուի թագաւորի օրով:
բ) Գագիկ թագաւորի օրով:
գ) Արտաշէս թագաւորի օրով:

3- Հայկական առաջին դպրոցը որ քաղաքին մէջ բացուեցաւ:

- ա) Անիի մէջ:
բ) Արգիշտիիսինիլիի մէջ:
գ) Վաղարշապատի մէջ:

4- Ո՞վ է այն մեծ մտաւորականը, որ այլ ազգային գործերու կարգին, իր երիտասարդ տարիքին եղած է ուսոցիչ, յետոյ տնօրէն, ապա «Մուրճ» ամսագրի աշխատակից: Եղած է նաեւ Համազգայինի Պէյրութի Ճեմարանի հիմնադիրներէն մէկը:

- ա) Գասպար Իփէկեան:
բ) Նիկոլ Աղբալեան:
գ) Յովհաննէս Թումանեան:

5- Երբ կը հիմնուի Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը:

- ա) 25 Ապրիլ 1925-ին:
բ) 1 Մայիս 1928-ին:
գ) 28 Մայիս 1928-ին:

6- «Համազգային»-ի նպատակը եղած է հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզուով եւ հայ հոգիով:

- ա) Ճիշդ:
բ) Սխալ:

7- Երբ Գայիանեաց 37 կոյսերը Վաղարշապատ (Էջմիածին) կը հասնին, որ կը բնակին:

- ա) Վաղարշապատ քաղաքի մեծահարուստ ընտանիքի մը մօտ:
բ) Սուրբ Շողակաթ եկեղեցւոյ հիւսիս-արեւելեան կողմը գտնուող այգիներուն մէջ:
գ) Սուրբ Էջմիածնի Ճեմարանին մէջ:

8- Հատապտուղները փոքր եւ հիւթալի պտուղներ են, որոնք հարուստ են կենսանիւթերով, մանրաթելերով եւ հակաօքսիտաններով:

- ա) Ճիշդ:
բ) Սխալ:

9- Թուէ՛ք քեզի ծանօթ 3-4 հատապտուղներ:

- ա)
բ)
գ)

10- Ի՞նչ կը կոչուի այն գիշերային կենդանին, որ երբ վախնայ, շատ տհաճ հոտ մը կ'արձակէ:

- ա) Գորշ արջ:
բ) Ժանտակուզ:
գ) Աղուէս:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylva@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւը պատրաստեց Շողիկ Ազարիկեան
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի